ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.09.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/144

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.08.2019թ. թիվ 26/26-1/14155-2019 գրությամբ «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 14.08.2019թ. թիվ 01/61-15834 գրության հիման վրա, 26.08.2019թ. թիվ 26/26-1/14155-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ-ի կողմից գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/144 ընթացակարգի շրջանակներում 03.09.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված Երևանի քաղաքապետարանի 14.08.2019թ. թիվ 01/61-15834 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ-ի միջև 27.05.2018 թվականին կնքված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/33-5 ծածկագրով աշխատանքների գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսած ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Ընկերությունը 24.07.2019թ. Երևանի քաղաքապետարանին հասցեագրված համապատասխան գրությամբ հրաժարվել է վերը նշված պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելուց և խնդրել է պայմանագիրը լուծել:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով ՀՀ քաղ. օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագիր կնքած անի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/144 ընթացակարգի շրջանակներում 03.09.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/144 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/144 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ-ի միջև 27.05.2018 թվականին կնքվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/33-5 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

2. «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ-ն Երևանի քաղաքապետարանին ուղղված 24.07.2019թ. գրությամբ հայտնել է, որ Պայմանագրի շրջանակներում Ընկերությունը գնահատելով աշխատանքային հնարավորությունները եզրահանգել է, որ սահմանված ժամկետում չի կարող իրականացնել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Ամփոփելով Ընկերությունը խնդրել է Պատվիրատուին լուծել Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.08.2019թ. թիվ 26/26-1/14155-2019 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 14.08.2019թ. թիվ 01/61-15834 գրությունը և կից փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝*** վճարել դրամ, հանձնել գույք, ***կատարել աշխատանք***, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, ***իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը***:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Երևանի քաղաքապետարանի և «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ-ի միջև 27.05.2018 թվականին կնքվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/33-5 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր, որի համաձայն Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1-ին կետի 1.3-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2019 թվականի հուլիսի 31-ը:

Երևանի քաղաքապետին ուղղված 24.07.2019թ. թիվ 28/14260 գրությամբ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարը հայտնել է, որ Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների կատարման համար 27.05.2019թ. «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ-ի հետ կնքվել է կապալային աշխատանքների կատարման գնման ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/33-5 պայմանագիրը, որի կատարման ժամկետը սահմանվել է 2019 թվականի հուլիսի 31-ը:

Պայմանագրի կնքման պահից մինչև այժմ նշված կազմակերպությունը աշխատանքները /3300քմ./ դեռ չի սկսել:

Ամփոփելով վերը նշված գրությունը, հայտնել է, որ կապալառուն խախտում է պայմանագրի 3.1.4 կետի պահանջները՝ ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար: Եվ խնդրել է միակողմանի լուծել պայմանագիրը:

Միաժամանակ «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ-ն Երևանի քաղաքապետարանին ուղղված 24.07.2019թ. գրությամբ հայտնել է, որ Պայմանագրի շրջանակներում Ընկերությունը գնահատելով աշխատանքային հնարավորությունները եզրահանգել է, որ սահմանված ժամկետում չի կարող իրականացնել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Ամփոփելով, Ընկերությունը խնդրել է Պատվիրատուին լուծել Պայմանագիրը:

«Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ-ին ուղղված 09.08.2019թ. թիվ 01/61-69163h գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ-ի միջև 27.05.2018թ. կնքված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/33-5 պայմանագրի համաձայն՝ վերջինս պարտավորվել է նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Նույն գրությամբ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ հաշվի առնելով Ընկերության 24.07.2019թ գրությունը, համաձայն որի Ընկերությունը փաստացի հրաժարվել է վերը նշված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելուց և խնդրել է Պայմանագիրը լուծել, Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ վաճառողն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 3.1.4-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ***Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները եթե.***

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է Պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:***

Նույն օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Այսպիսով՝ գտնում եմ, որ «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ-ն Երևանի քաղաքապետարանին ուղղված 24.07.2019թ. գրությամբ հրաժարվելով Պայմանագրով ստանձնած պարտականությունների հետագա կատարումից թույլ է տվել վերջինիս և Երևանի քաղաքապետարանի միջև 17.05.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/33-5» պայմանագրով

նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Հետևաբար, գտնում եմ, որ «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.08.2019թ. թիվ 26/26-1/14155-2019 գրությամբ «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**